շեց իր հովվապետական այցերը Ռումինիա, հանդիպումները Դանիել պատրիարքի եւ երջանկահիշատակ Թեոկտիստ պատրիարքի հետ, նաեւ գոհունակությամբ անդրադարձավ ռումին ժողովրդի քրիստոնեական հավատի խորը ապրումին:

Հանդիպման ավարտին հաջողություն մաղթելով հայ-ռումինական մշակութային գործակցությանը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց առավել զորացնել երկու ժողովուրդների դարերով փորձված բարեկամությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հուլիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Իսսամ Նայալին: Հանդիպմանը Նորին Սրբությունը մտահոգությամբ անդրադարձավ Սիրիայում տիրող իրավիճակին՝ խորին ցավ հայտնելով հակամարտության հետեւանքով Սիրիայի ժողովրդի կրած կորուստների եւ պատճառված ավերածությունների համար: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց Եկեղեցին շարունակելու է իր գործակցությունը բերել ծանր կացության մեջ գտնվող Սիրիայի ժողովրդին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ Աստծու օգնականությամբ Սիրիայում խաղաղություն ու համերաշխություն կհաստատվի, եւ Սիրիայի ապրվածասեր ժողովուրդը կվերագտնի իր բնականոն կյանքի ընթացքը: Իր հերթին տիար Իսսամ Նայալը Սիրիայի ժողովրդի անունից երախտագիտություն հայտնեց հայ ժողովրդին եւ Հայոց Եկեղեցուն՝ ցուցաբերած մարդասիրական օգնության համար: Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը Նորին Սրբությանը փոխանցեց նաեւ Սիրիայի գլխավոր մուֆթի շեյխ Ահմադ Բադր ադ-Դին Հասանի ողջույնները:

Վերջում Վեհափառ Հայրապետը, վերստին կարեւորելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների ամրապնդումը, Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին արդյունավոր առաքելություն մաղթեց Հայաստանում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Ռուսաստանի Դաշնության Տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի:

ՌԴ տրանսպորտի նախարարը Ս. Էջմիածնում

ՌԴ դեսպանը Ս. Էջմիածնում

Ողջունելով Ռուսաստանի Տրանսպորտի նախարարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ երկու երկրների գործակցային ջերմ հարաբերություններին: Նորին Սրբությունը կարեւորեց երկու ժողովուրդների՝ քրտինքով եւ արյամբ նվիրագործված բարեկամական հարաբերությունների նախանձախնդիր պահպանումն ու զարգացումը: Վեհափառ Հայրապետը զրույցի ընթացքում նշեց, որ հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության կերտման ակունքներում քրիստոնեական հավատն է եղել ու այսօր էլ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիներն առանձնակի ջանքեր են ներդնում երկու երկրների հարաբերությունների ամրապնդման համար:

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ սեպտեմբերին կայանալիք Մոսկվայի նորակառույց առաջնորդանիստ հայկական եկեղեցու օծման արարողությանը, որը նշանակալի կարեւորություն պիտի ունենա մասնավորապես Ռուսաստանի հայ համայնքի համար:

Իր հերթին Ռուսաստանի Տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը շնորհակալություն հայտնեց համաքրիստոնեական նշանակություն ունեցող հայոց հոգեւոր կենտրոնում ջերմ ընդունելության համար՝ ուրախությամբ արձանագրելով, որ երկու երկրների հարաբերությունները հատկանշվում են ոչ միայն սերտ գործակցային, այլեւ բարեկամական ոգով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՖ-ՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը շնորհավորեց Ռուսաստանի դեսպանին նշանակման առիթով՝ իր աղոթքն ու բարեմաղթանքները բերելով նրա առաքելության հաջող իրականացման եւ արդյունավորման համար:

Իր խոսքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջեւ դարերի ընթացքում ձեւավորված ջերմ հարաբերություններին՝ ուրախությամբ արձանագրելով, որ երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում իր կարեւոր ներդրումն ունի նաեւ Հայոց Եկեղեցին:

Զրույցի ընթացքում երկուստեք կարեւորվեց տարբեր բնագավառներում հարաբերությունների առավել սերտացումը, ապա անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների եղբայրական հարաբերություններին եւ Ռուսաստանի հայկական համայնքի հոգեւոր կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ